ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «29» 02 2024թ.

ՀՐԱՄԱՆ N 82-Լ

ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՈՊՈՐՏԱԼԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածական տվյալների մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի վարման կարգը համաձայն՝ հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն Կադաստրի կոմիտեի cadastre.am պաշտոնական կայքի «Իրավական ակտեր» բաժնի «Կոմիտեի ղեկավարի հրամաններ» ենթաբաժնում տեղադրելուն հաջորդող օրը:

2/29/2024

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393

Հավելված
Կադաստրի կոմիտեի ղեկավարի
2024 թվականի հունվարի 29-ի
N 82 -Լ հրամանի

ԿԱՐԳ
ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՈՊՈՐՏԱԼԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է «Տարածական տվյալների մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալի վարման կարգը:

2. Սույն կարգը սահմանում է՝

1) ազգային գեոպորտալի ստեղծման, շահագործման և շահագործումից հանելու, արդիականացման և զարգացման կարգը, ինչպես նաև ազգային գեոպորտալի օպերատորի գործառույթները.

2) ազգային գեոպորտալ մուտքագրման ենթակա տեղեկատվությունների կառուցվածքը:

3. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **«ազգային գեոպորտալ»**՝ համացանցային, սարքածրագրային համալիր՝ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի հիմնական տարր, որն ապահովում է տարածական տվյալների հասանելիությունը վեբ տեխնոլոգիաների միջոցով և որը գործարկվում է geoportal.am, maparmenia.am կայքերի միջոցով.

2) «ազգային գեոպորտալի օպերատոր»՝ Կադաստրի կոմիտեի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանումը, որը սույն կարգով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրականացնում է համակարգի անխափան աշխատանք և տեխնիկական կառավարում.

3) «տարածական տվյալներ օգտագործող»՝ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, պաշտոնատար անձ, ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձ, որոնք օգտագործում են ազգային գեոպորտալը և (կամ) տեղեկատվություն են ստանում դրանից.

4) «տարածական տվյալներ տրամադրող»՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, իրավաբանական անձինք, որոնք իրենց

կառավարման ներքո գտնվող օբյեկտների, գույքի և ռեսուրսների վերաբերյալ ազգային գեոպորտալի օպերատորին տրամադրում են համապատասխան տեղեկատվություն

5) **«առցանց քարտեզագրական ծառայություններ»**-OGS ստանդարտներին համապատասխան ծառայություններ՝ WMS, WMTS, WFS, WCS:

4. Ազգային գեոպորտալը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է: Ազգային գեոպորտալը պետական տեղեկատվական համակարգ է, որը փոխգործակցում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ տեղեկատվական համակարգերի (պորտալների) հետ:

5. Ազգային գեոպորտալի տվյալների պահոցի հիմքը կազմում են տվյալների ռելացիոն բազաները և տվյալների բազաների կառավարման ռելացիոն համակարգերը, որոնք տարածական տվյալների դեպքում ունեն համապատասխան կիրառման հնարավորություն:

6. Ազգային գեոպորտալը ապահովում է հետևյալ հիմնական գործառույթների իրականացումը՝

1) ազգային գեոպորտալում ընդգրկված տարածական տվյալների և մետատվյալների որոնումը, հավաքումը, ստեղծումը, պահպանումը, մշակումը, խմբագրումը, տրամադրումը և տարածումը.

2) ազգային գեոպորտալում ներառվող տարածական շերտերի հասանելիությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ պայմանավորված օգտագործողի աստիճանակարգով (կարգավիճակով).

3) ազգային գեոպորտալի տեղեկատվական փոխգործելիությունը, ներառյալ տեղեկատվության փոխանակումը պետական և այլ տեղեկատվական համակարգերի միջև.

4) ազգային գեոպորտալում ներառված տարածական տվյալների տրամադրումն օգտագործողին.

5) տարածական տվյալների օգտագործման հետ կապված ծառայությունների մատուցում այլ տեղեկատվական հարթակների հետ տեղեկատվական փոխգործելիության միջոցով.

6) տարածական տվյալների օգտագործման հետ կապված էլեկտրոնային ծառայություններ, որոնք ապահովում են տարածական տվյալների վերլուծությունը և հաշվետվությունների կազմումը:

7. Ֆիզիկական և իրավաբանական անձանց հասանելիությունը ազգային գեոպորտալում և տարածական տվյալների ոլորտային պորտալներում տեղադրված տեղեկատվությանն ապահովվում է ընդհանուր օգտագործման ցանցերի, ներառյալ համացանցի օգտագործման միջոցով:

8. Ազգային գեոպորտալը և պարունակող տեղեկատվությունը ենթակա է թարմացման առնվազն տասը տարին մեկ անգամ:

9. Ազգային գեոպորտալը ներառում է հետևյալ ենթահամակարգերը՝

1) տվյալների մշակման, հավաքման և պահպանման ենթահամակարգը.

2) տվյալների ստուգման և համեմատության ենթահամակարգը.

3) տեղեկատվական փոխգործելիության ենթահամակարգը.

4) օգտագործողների աջակցության ենթահամակարգը.

5) տվյալների վերլուծության և հաշվետվությունների ձևավորման ենթահամակարգը.

6) ֆունկցիոնալ գործիքների ենթահամակարգը.

7) գեոկոդավորման ենթահամակարգը.

8) ծառայությունների դիմաց վճարումների ենթահամակարգը.

9) «Մետատվյալների շտեմարան» ենթահամակարգը.

10) «Քարտեզագրական շերտերի արտապատկերման» ենթահամակարգը.

11) էլեկտրոնային ծառայությունների մատուցման ենթահամակարգը.

12) տեղեկատվական անվտանգության ենթահամակարգը:

10. Ազգային գեոպորտալի սուբյեկտները բաժանվում են երեք խմբերի՝ տարածական տվյալներ օգտագործող, տարածական տվյալներ տրամադրող (խմբագրող) և ազգային գեոպորտալի օպերատոր:

11. Ազգային գեոպորտալի օգտագործումն իր մեջ ներառում է՝

1) տարածական տվյալների ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ազգային գեոպորտալում տեղադրված տեղեկատվությունն օգտագործելը,

2) ազգային գեոպորտալում պարունակվող տեղեկատվությունը դիտելը և համապատասխան հարցումներ կատարելը:

12. Ազգային գեոպորտալին տարածական տվյալներ տրամադրողին (խմբագրողին) հնարավորություն է ընձեռվում՝

1) ներբեռնել տարածական տվյալներ ազգային գեոպորտալ և այդ տարածական տվյալների համար ավելացնել և խմբագրել մետատվյալներ.

2) մուտք գործել, փոխել գաղտնաբառերը և տեսնել գեոպորտալի այն հատվածները, որոնք հասանելի են իրեն.

3) գտնել իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը՝ օգտագործելով բանալի բառեր/կոորդինատներ.

4) ստեղծել նոր հարցումներ և փոփոխել հարցումների կանխորոշված կանոնները.

5) դիտել տվյալների շտեմարանը.

6) ապահովել տեղեկատվության ամբողջականությունը, արդիականությունը և հավաստիությունը, որոնց փոխանակումն իրականացվում է համակարգի հետ տեղեկատվական փոխգործելիության ընթացքում.

7) տեղեկացնել համակարգի օպերատորին համակարգի աշխատանքի խափանումների և խախտումների մասին, որոնք կարող են հանգեցնել համակարգի օգտագործման անհնարինության, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության պահանջների խախտումների:

13. Ազգային գեոպորտալի օպերատորը ապահովում է՝

1) ազգային գեոպորտալի անխափան աշխատանքը, ներառյալ ծրագրային և տեխնիկական միջոցների գործունակությունը, ինչպես նաև դրա գործունեության տեխնիկական աջակցությունը.

2) ազգային գեոպորտալում տեղադրված տեղեկատվության ամբողջականությունը, արդիականությունը և հավաստիությունը, որոնց փոխանակումն իրականացվում է ազգային գեպորտալի հետ տեղեկատվական փոխգործելիության ընթացքում.

3) ազգային գեոպորտալի տեխնոլոգիական և տեղեկատվական փոխգործելիությունը տարածական տվյալներ տրամադրողների և օգտագործողների տեղեկատվական համակարգերի հետ.

4) տարածական տվյալներ տրամադրողներին և օգտագործողներին մեթոդական աջակցությունը՝ ազգային գեոպորտալի տեխնիկական օգտագործման վերաբերյալ.

5) ազգային գեոպորտալում պարունակվող տեղեկատվության պաշտպանությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան.

6) ազգային գեոպորտալի վարումը, ներառյալ տարածական տվյալներ տրամադրողների կողմից տրված տեղեկատվության մուտքագրումը, տարածական շերտերի և մետատվյալների ավելացումը և հեռացումը.

7) ազգային գեոպորտալում տեղադրված տեղեկատվության ընդունումը, պահպանումը և տրամադրումը.

8) ազգային գեոպորտալում իրականացված հարցումների վերաբերյալ վիճակագրության և հաշվետվության կազմումը.

9) հաստատված էլեկտրոնային տեղեկատվության ձևաչափերի պահանջներին համապատասխան ազգային գեոպորտալի հետ տեղեկատվական փոխգործելիության միջոցով տեղեկատվության փոխանակումը.

10) հաստատված էլեկտրոնային տեղեկատվության ձևաչափերի պահանջներին համապատասխան օգտագործողներին տեղեկատվության տրամադրումը.

11) հետևյալ տեխնիկական գործառույթները.

ա. օգտագործողների գրանցումը,

բ. օգտագործողների ակտիվացումը և ապաակտիվացումը,

գ. օգտագործողների կապակցումը իրավունքների խմբին և գեոխմբին,

դ. օգտագործողների գաղտնաբառերի վերականգնումը,

ե. քարտեզագրական սերվիսների ակտիվացումը և կառավարումը,

զ. նոր գեոխմբերի ստեղծումը,

է. գեոխմբերում նոր շերտերի ավելացումը,

ը. նոր իրավունքների խմբերի ստեղծումը:

14. Ազգային գեոպորտալում տեղադրված տեղեկատվությունն ենթակա է պաշտպանության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. Ազգային գեոպորտալում մուտքագրված տեղեկատվության ներկայացումը ազգային գեոպորտալի օպերատորին իրականացվում է ոլորտային տեղեկատվական համակարգերի հետ տեղեկատվական փոխգործելիության շրջանակներում:

16. Ազգային գեոպորտալի վարման ընթացքում իրականացվում է տեղեկատվական փոխգործելիություն Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգի հետ:

17. Ազգային գեոպորտալը պարունակում է որոնման և դիտման հնարավորությամբ համընդհանուր հասանելիությամբ տեղեկատվություն և տարածական տվյալներ:

18. Ազգային գեոպորտալում տեղադրման ենթակա տեղեկատվության կառուցվածքը ձևավորվում է ազգային գեոպորտալի լիազոր մարմնի, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ տեղեկատվական համակարգերում պարունակվող տարածական տվյալների և հարակից այլ տեղեկատվությունից:

19. Կառուցվածքն իր մեջ ներառում է՝

1) բնական օբյեկտների և արհեստական օբյեկտների մասին տեղեկատվություն՝ դրանց ձևի, գտնվելու վայրի և հատկանիշների մասին տեղեկատվություն, այդ թվում՝ կոորդինատների օգտագործման միջոցով.

2) բազային և թեմատիկ տարածական տվյալների վերաբերյալ տեղեկատվություն.

3) այլ տեղեկատվություններ տարածական օբյեկտների և դրանց բնութագրերի մասին:

20. Տեղեկատվությունը, որը փոխանակվում է ազգային գեոպորտալի հետ տեղեկատվական փոխգործելիության միջոցով, ազգային գեոպորտալում ինքնաշխատ եղանակով անցնում է տվյալների վերահսկում:

21. Ազգային գեոպորտալի ստեղծումը, արդիականացումը և զարգացումն իրականացվում են օրենսդրության պահանջներին համապատասխան:

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Կադաստրի կոմիտեի ղեկավար՝ Signed by: TOVMASYAN SUREN 1201860393 Սուրեն Թովմասյան